

631.5

n-45

ԱՅՆԵԼ ՀԱՅԱՅԱՏԻԿՆԵՐԻ ԱՐՏԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՏ
ՈՍԳԱՅՈՒՄ ՄԻՆՁԵՎ 7-8 ՄԻԼԻԱՐԴ ՓԹԻ [Բ.ՍՏԱՆԻՆ]

Լ. Գոսկանյան

Բերքաբուծական
բարձրապատիվ
Միջոցառումները

631.5
Ո-45

ԱՅՈՒՆ ՍԵՎՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ
ՀՍՀՍԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
«ԳՐՈՇ»
ՈՒՍՏՈՎ-ՅՈՒՆ-1936

631.5
Ո-45

այ

ԼԵՎՈՆ ՎՈՍԿԱՆՅԱՆ

04 AUG 2010


20

**ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ «ԳՐՈՂ»
ՌՈՍՏՐՎ-ԴՈՆ—1936

16.07.2013

16.958



Նկ. 21. Կորեկի մրկի:

Նկ. 22. Սորգոյի մրկի:



3319
41

Ответ редактор И. Лукасян
Тех. редактор Д. М. Джинибалаян

Уполкрайлит С—5783. Формат Б5. Сдано в набор 7 сентября 1936 г. Подписано в печать 10 октября 1936 г. Об'ем 31/4 печатных листов. Заказ № 403. Тираж 600

Типография краевого армянского издательства „ГРО“
Ростов н-Дону, Ворошиловский пр. № 27



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|------|
| Ներածութիւնն | էջ 3 |
| Բերքի բարձրացումը և աղբոտեխնիկան | 9 |
| Հերկը, տափանումը և գյուղատնտեսական կուլտուրաների կուլտիվացիան | 13 |
| Ցելերի մշակումը | 16 |
| Ցանկու սերմացույի նախապատրաստումը և այլ գործողութիւններ | 20 |
| Ցանքսը շարքացանով և տայքար յեղանակի վատ ազդեցութիւնը | 26 |
| Բերքահավաքը և բերքահավաքի մեքենաները | 43 |
| Հավելված.—Մրիկի (զանալի) տեսակները զանազան հացաբույսերի վրա | 48 |

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1935թ. դեկտեմբերի 1-ին առաջավոր կոմբայնավարներին ու կոմբայնավարուհիներին խորհրդակցութեանն արտասանած իր ճառում ընկեր Ստալինը նշեց, Վոր անցյալ տարվա նվաճումները գյուղատնտեսութեան ասպարեզում այնքան ել նվազ չէին. 1935 թվին մենք հավաքեցինք ավելի քան 5,5 միլիարդ փութ հացահատիկ: Այսքանը միանգամայն հերիք ե, Վոր Վոչ միայն բնակչութիւնն ապահովված լինի հացով, այլև մի մասն ել մնա վորպես պաշար անակնկալ զեպքերի համար:

Հիշյալ ճառում ընկ. Ստալինն ասաց. «Ինչով բացատրել հացահատիկի պահանջի հսկայական աճը մեր յերկրում:

1. «Մեր յերկիրն այլևս այլ չէ, ինչվոր եր անցյալում, մինչհեղափոխական տարիներում: Անցյալի հետ համեմատած՝ սեր արդյունաբերութիւնն ու քաղաքները կրկնակի աճել են»:

«...Միքանի միլիոն աշխատավորներ գյուղից հանված ու քաղաք են փոխադրված. նրանք դարձել են բանվորներ և ծառայողներ ու ներկայումս, մնացյալ

բանվորները հետ միասին, առաջ են մղում արդյունաբերությունը»:

2. «Անցյալում մենք տեխնիկական կուլտուրաներ ավելի քիչ ունեցինք, քան թե այժմ: Նեկայումս մենք յերկու անգամ ավելի բամբակ ենք արտադրում, իսկ վուշ, ձափնդեղ և այլն տեխնիկական կուլտուրաներ անհամեմատ ավելի յենք արտադրում, քան թե առաջ: Իսկ սրանից ի՞նչ է հետևում: Իսկ սրանից հետեւում է այն, վոր տեխնիկական կուլտուրաների արտադրությունը զբաղված մարդիկ չեն կարող բավարար չափով զբաղվել հացահատիկի արտադրությունը: Հետևաբար հարկավոր է ունենալ հացահատիկի ավելի մեծ պաշար այդ մարդկանց համար... Յեթե մենք ուզում ենք առաջ մղել մեր թեթև ու սննդային արդյունաբերությունը, ապա մեզ հարկավոր է ավելի ու ավելի ընդարձակել տեխնիկական կուլտուրաների արտադրությունը»:

3. «Անցյալում, ցարական Ռուսաստանում, 4 — 5 միլիարդ փութ հացահատիկ եյին արտադրում»: «...Ցարական կառավարությունը հացն արտահանում էր արտասահման, գիտենալով հանդերձ, վոր յերկրի 20—30 միլիոնի չափ չբավոր գյուղացիությունը հարկավոր չափով սնունդ չունենալով, կիսակուշտ է մնում»:

«...Սորհրդային կառավարությունը չի կարող հանդուրժել, վոր բնակչությունը կիսակուշտ լինի»:
«...Մենք հաստատուն կերպով փոքր ենք դրել ունեւորություն ուղին»:

«Դուք կհարցնեք—ի՞նչ յեղան 20—30 միլիոն սովահար չբավորները: Նրանք մտել են կոլխոզները, այնտեղ հաստատվել են և հաջողությամբ կադուցում են իրենց ունեւոր կյանքը... Իա նշանակում է, վոր այդ

բազմամիլիոն աշխատավոր գյուղացիությունը կերակրելու համար մենք պետք է շատ ավելի հաց ունենանք, քան անցյալում, վորովհետև յերեկվա չբավոր գյուղացիները և այսօրվա կոլխոզնիկները, վորոնք արդեն հաստատված են կոլխոզներում, պետք է բավականաչափ հաց ունենան՝ իրենց ունեւոր կյանքը կառուցելու համար: Դուք գիտեք, նրանք այդ հացն արդեն ունեն, փսկ ապագայում էլ ավելի շատ են ունենալու»:

4. «Այժմ ամենքն ասում են, վոր մեր աշխատավորները նյութական դրությունը զգալի չափով բարւոյրվել է, վոր կյանքը դարձել է ավելի լավ, ավելի սուրբ: Դրա հետևանքն է անշուշտ, վոր բնակչությունը ավելանում է ավելի արագությամբ, քան թե առաջ: Ներկայումս մեր բնակչության թիվն ավելանում է տարեկան մոտ յերեք միլիոն հոգով: Դրա հետ միասին՝ գնալով ավելանում է նաև սննդամթերքի կարիքը»:

5. «...Բայց սննդամթերք պսելով միայն հացը չպետք է հասկանաք: Ժողովրդին անհրաժեշտ է նաև միսը, ձարպեղենը: Հետևաբար անհրաժեշտ է, վոր մեր անասնաբուծությունը լավ հիմքերի վրա դրված լինի. անհրաժեշտ է ունենալ մեծ թվով մանր ու խոշոր անասուններ, վորպեսզի կարելի լինի գոհացնել մսեղեն արտադրանքի նկատմամբ բնակչության որավոր աճող կարիքը: Իսկ անասնաբուծությունը չի կարող բարգավաճել, յեթե անասուններին կերակրելու համար հացահատիկի մեծ քանակությամբ պաշար չունենանք: Հետևաբար, միայն հացահատիկային աճող ու ծավալվող տնտեսությունն է, վոր կարող է ստեղծել այն պայմանները, վորոնք անհրաժեշտ են անասնաբուծության աճման համար:

Անա այս պատճառներն են, վոր առաջադրում են

մեզ անհետաձգելի մի խնդիր, այսինքն՝ հացահատիկի տարեկան արտադրությունը մոտիկ ապագայում հասցրնել 7—8 միլիարդ փթի»:

Այդ խնդրի լուծումը պահանջ է դնում հողը մշակել ավելի կուլտուրական ձևով, արագորեն բարձրացնել կոլխոզ-սովխոզային դաշտերի բերքատվությունը:

Առաջնորդի լոգունը շտեմնված արագությամբ տարածվեց մեր լայնածավալ յերկրի բոլոր անկյուններում: Ամենուրեք բարձր բերքատվության վարպետների նախաձեռնությամբ ստախանովյան մրցակցություն կազմակերպվեց յերկրամասերի, մարզերի, հանրապետությունների, ուսյունների և կոլխոզ-սովխոզներին միջև: Հենց ստախանյան առաջադրանքի կատարման համար կուսակցության Ազով-Սևծովյան Յերկրային կոմիտեն և Յերկրագործկոմը կրկնակի բերքատվության ստախանյան արշավ հայտարարեցին, իսկ այնուհետև ամբողջ յերկրամասը սոցիալիստական մրցման մեջ մտավ Դնեպրոպետրովսկի մարզի հետ:

Ընկեր Ստալինի առաջադրանքը կատարելու համար Ազով-Սևծովյան յերկրամասը պարտավորություն է հանձն առել բերքի քանակը կրկնապատկել և 1936 թվին 270 միլիոն փութ հացահատիկի փոխարեն հավաքել 550 միլիոն փութ հացահատիկ:

Մեր յերկրամասի թերթերը հրապարակել են կոլխոզների, սովխոզների, բրիգադիաների, տրակտորիստների, կոմբայնավարների, ողակավարների առաջադրություններն ու պարտավորությունները բերքատվության բարձրացման ուղղությամբ: Շքանշանակիր Անդրեյ Վոլոշինի արակտորային բրիգադը պարտավորվել է այս տարի ամեն մի տրակտորով մշակել 2000 հեկտար: Նրա հետ մրցող Մյանիկյանի ՄՏ կայանի շքանշանակիր Մ. Սարաբաշյանը խոսք է տվել ամեն մի տրակտորին

2100 հեկտար արտադրանք տալ: Շքանշանակիր կոմբայնավարուհի Կոֆանովան պարտավորվել է հավաքել 800 հեկտարից վոչ պակաս: Շքանշանակիր կոլխոզային բրիգադիաներ Բիշկալովը և Պլախուտինը խոստացել են ամեն մի հեկտարից տալ վոչ պակաս, առաջինը՝ 35 ցենտներ հացահատիկ, Զ-բղը՝ 30 ցենտներ: Գիտահետազոտական հիմնարկները ևս ընդգրկված են մրցման մեջ, վորոնք գործնական ոգնություն են կազմակերպում կոլխոզներին, սովխոզներին և այլն:

Տարեկան 7—8 միլիարդ փութ հացահատիկ արտադրելու Ստալինյան առաջադրանքով զբաղվեց նաև Ազով-Սևծովյան Յերկրամասի արտադրողական ուժերն ուսումնասիրող կոնֆերենցիան:

Այս կոնֆերենցիայում զեկուցող ակադեմիկոս Վալիլովը նշեց, վոր ամեն տարի ցանված բազմատեսակ կուլտուրաների բռնած ցանքսային տարածության մեծությամբ Ազով—Սևծովյան յերկրամասն առաջին տեղն է գրավում Սորհրդային Միության մեջ: Ներկայումս մոտ 8 միլիոն հեկտար տարածություն բրունըված է զանազան կուլտուրաներով: Մակայն այս ահագին տարածությունը, վոր բռնված է դյուղատնտեսական կուլտուրաներով, վերջնական չափը չի ներկայացնում, այլ կարող է ել ավելի ընդարձակվել: Ըստ միջանի կուլտուրաների, ինչպես, որինակ, աշնանացան ցորենը, գարին, արևածաղիկը, յեգիպտացորենը և այլն, մեր յերկրամասը հանդիսանում է առաջատարը Սորհրդային Միության մեջ:

Բերքատվության ցածր լինելը նախ և առաջ հետեվանք է նրա, վոր ագրոտեխնիկական ձեռնարկությունները ճշտությամբ չեն կատարվում, վարելու ժամկետերն անտեսվում են, զարնանացանը ժամանակին չի կատարվում, շարատունկերի խնամքը թերի յե, ցելը

անխնամ ե մշակվում, կանոնավոր ցանքսաշրջանառու-
թյունը բացակայում է: Յեվ գրանից է, վոր անբա-
րենաշող կլիմայական պայմանները կրկնապատկում
են ագրոտեխնիկայի չկիրառմամբ առաջացված ներ-
գործությունը: Միանգամայն կասկածից դուրս է,
վոր ագրոտեխնիկական ձեռնարկումների կանոնավոր
կատարումը արտերի մաքրությունը, կանոնավոր ցանք-
սաշրջանառությունը, աշնանացանի աշնան հերկը,
մաքուր ցելը կարող են կրկնապատկել բերքատու-
թյունն ամբողջ յերկրամասում:

Պետք է ասել, վոր մեր Ագուլ-Սևծովյան յերկրամասը,
իբրև յերկրի հացահատիկային վճռող ուսյոններից
մեկը, կարող է և պետք է գրավի առաջավոր տեղը՝
բերքը բարձրացնելու, կրկնապատկելու խնդրում:
Պարզ է, վոր տեխնիկական լիակատար սարքավո-
րումը, կոլեկտիվացման ավարտումը և բավական
չափով կազրերի ստեղծումը, նրանց անեցումը տա-
լիս են բոլոր պայմանները, վորոնք անհրաժեշտ են
կարճ ժամկետում կրկնապատիկ բերք ստանալու
համար:

ԲԵՐԲԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ ՅԵՎ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՆ

Անցյալ 1935 թվին, շնորհիվ գյուղատնտեսության
ստախանովականների գործ դրած աշխատանքի, բեր-
քատույնության զգալի բարձրացում է նկատվում:

1935 թվականը նշվում է վորպես բերքատույնության
բարձրացման սկիզբ: Հետագայում այդ բարձրացումը
շատ ավելի յե լինելու, վորովհետև ներկայումս յերկ-
րամասի գյուղատնտեսությունն ոժտված է բազմա-
թիվ մեքենաներով, կան բավարար քանակությամբ
կադրեր, վորոնք տիրապետում են իրենց աշխատան-
քի տեխնիկային: Հետևաբար բերքի բարձրացման
գործը հաջողությամբ կատարելու պայմաններ կան:
Ի հաստատություն վերոհիշյալի կարելի յե վերցնել
կոլխոզային արտերի այն ստախանովական բրիգադի-
ների աշխատանքների արդյունքը, վորոնք կուբանում
կարողացել են ստանալ աշնանացան ցորենից՝ 20 ցենտ-
ներ, գարուց՝ 25 ցենտներ, յեգիպտացորենից՝ 40
ցենտներ, տզկանեփից՝ 10 ց. ճակնդեղից՝ 350
ց., պրևսածաղիկից՝ 16 ց.: Նրանք որինակ են հանդի-
սացել, թե ինչպես հնարավոր է արագ կերպով բերքն

ավելացնել: Դրա հետ միասին, 1935 թվին, մեր
յերկրամասի 44 ռայոնում կային 129 տրակտորային
բրիգադներ, վորոնք մի տրակտորով արտադրում են
ավելի քան հազար հեկտար: Շքանշանակիր Վոլոշինի
տրակտորային բրիգադն անցյալ տարի ամեն մի տրակ-
տորով արտադրել է 1671 հեկտար, իսկ Մյասնիկյան
ՄՏ կայանի շքանշանակիր Սարաբաշյանի տրակտո-
րային բրիգադի յուրաքանչյուր տրակտորը 1470 հեկ-
տար:

Աշնանացան ցորենի կրկնապատիկ բերքի հարցում
բացառիկ նշանակություն են ստանում բոլոր ժանգա-
կայուն տեսակները (ստավրապոլկա և ուրիշները):

Աշնանացան ցորենի ժանգակայուն տեսակները
1936 թվին կբավարարեն հարյուր հեկտար ցանելու
համար, իսկ 1937 թվին՝ սերմնաբուծարանի պլանի
համաձայն՝ կարող են գոհացում տալ հարավային բո-
լոր ռայոնների մեծագույն մասի կարիքներին: Աշնա-
նացան ցորենի՝ ժանգի հանդեպ անկայուն տեսակնե-
րը փոխելու հետ միասին անհրաժեշտ է բարձրացնել
հողի մշակման վորակը թե ցել անելիս և թե խոզան-
ները վարելիս. նույնը պետք է անել նաև շարատունկ-
ների արտերում: Մաքուր ցելը զգալի կերպով պա-
կասեցնում է արտերի աղտոտվածությունը, թույլ է
տալիս ցանքսը ժամանակին կատարել, վորով և բարձ-
րանում է բերքատվությունը:

Համարյա նույնպիսի նշանակություն ունի նաև վաղ
կատարված խոզանավարը: Մակայն, յեթե ամառը չո-
րային է, գերադասելի յե բերքահավաքից հետո անմի-
ջպես սկսել խորունկ վարը:

Տևական մշակման յենթարկված արտերում ցանված
աշնանացանները վորքան վաղ ցանված լինեն, այնքան
ավելի բերք են տալիս: Ուստի շարատունկ կուլտու-

րաների վաղ և արագ հավաքումն արտերից, ինչպես և
այդ արտերի որինակելի, լավ մշակումը վորնչացում են
մոլախոտերը և աշնանացանների բերքի բարձրացման
հիմնական պայմանն են հանդիսանում:

Ինչ վերաբերում է յերկրամասի հյուսիսային և մա-
սամբ կենտրոնական միջանի ռայոններին, ապա այս-
տեղ աշնանացան հացաբույսերի բերքի բարձրացումը
մինչև 18 ցենտներ իրագործվելու յե ի հաշիվ մաքուր
վաղ և կուլիսային ցելերի լայնորեն կիրառման. այս-
պիսի միջոցառումների շնորհիվ հյուսիսային ռայոն-
ների միջին բերքը տանամյակում, ըստ յերկրային
փորձակայանի և Դոնեցկիյ ու Դոնսկոյ փորձադաշ-
տերի տվյալների, հասնում է 17—18 ցենտներին:

Փարնանացան ցորենի բերքի բարձրացումը մինչև
10 ցենտներ մի հեկտարից հնարավոր է այն բոլոր
միջոցների կիրառումով, վորոնք մշակված են յեր-
կրի փորձառու հիմնարկների կողմից. նրանք կարողա-
ցել են 10 ցենտներ բերք ձեռք բերել՝ հետևելով կա-
նոնավոր ցանքսաշրջանառություն, կիրառելով աշնա-
նավարը, բերքահավաքից հետո իսկույն խոզանավարն
սկսելով, ցանելուց առաջ բարեխիղճ կերպով հողը
մշակելով, զտած տեսակավոր սերմացու ցանելով,
բաղհանելով, յարովիզպիայի յենթարկելով և այլն:

1936 թվին բոլոր կոլխոզները գարնանացանը ցա-
նել են աշնանը վարած հողերում, առանց ուշացնելու,
սերմացուները զտված են յեղել և ստուգված, նրանք
հետևել են ստախանովական առաջավոր այն բրիգադ-
ներին, վորոնք 1935 թվին կարողացել էին ձեռք
բերել գարնանացան ցորենի 12 ցենտներ բերք:

Ժամանակին կատարված ցանքսի հաջողությունները
1936 թվին մենք կտեսնենք նաև գարնանացան գարու,
յեզիպտացորենի, արևածաղկի, տղկանեփի և տեխնի-

կական այլ կուլտուրաների նկատմամբ: Յեթե հաւ-
կափօր հացաբուլսերի քաղհանը չուշանա, յեթե ար-
մատապտուղների և մյուս շարատունկ կուլտուրաների
քաղհանը, փխրացոււմը (շարովկա) և փնջափորումը
(բուկետիրովկա) ժամանակին կատարվի, ապա մենք
կունենանք լավ բերք:

Բայց լավ բերք ստանալու համար հարկավոր է ճշ-
տիվ կատարել ագրոտեխնիկայի պահանջած անհրա-
ժեշտ աշխատանքների մաբողջ կոմպլեքսը: Անկասկած
է, վոր կատարվող աշխատանքների կոմպլեքսում գե-
բակչուող դերը խաղայու յեն առաջավոր կոմբայնա-
վարների և տրակտորիստների աշխատանքները:

Բայց և սյնպես բերքը պահանջված արդյունքը չի
տա, յեթե տրակտորիստը և կոմբայնավարը չհետևեն
կոմպլեքսային այն աշխատանքներին, վորոնք գործ
են դրվում հացաբուլսերի բերքը բարձրացնելու հա-
մար:

Կուլտուրների և սովխոզների գիտակից աշխատողները
պետք է իմանան ու հասկանան, վոր լոկ ցանկու-
թյամբ բերքը չի ավելանա. անհրաժեշտ է նաև գի-
տենալ ագրոտեխնիկան:

Ի՞նչ բան է ուրեմն ագրոտեխնիկան:

Իա գյուղատնտեսական կանոնների և հողի մշակ-
ման գիտականորեն հիմնավորված այն անհրաժեշտ
գիտելիքներն են, վորոնք կուլտուրական բույսեր խնա-
մելու համար են կիրառվում:

Վորովհետև հողը հանդիսանում է այն միջավայրը,
ուր զարգանում է ցանված սերմացույի սաղմը և
վորտեղից դաշտային կուլտուրաների ծիլերն ստանում
են բերք առաջացնելու համար անհրաժեշտ սննդարար
նյութերը, ապա ուրեմն դրանից ել կսկսենք մեր ասե-
լիքը:

Վորպեսզի ցանած սերմացուն ծլի ու աճի, նրան
անհրաժեշտ է ջերմություն, խոնավություն և ողի
ազատ հոսանք: Վարելու միջոցով հողը փխրանում է
և ողն ազատ մուտք է գտնում այնտեղ: Բացի դրանից,
հողն ունենալու յե բավարար չափով դյուրաշարացուցիչ
նյութեր (ազոտ, կալի, ֆոսֆոր): Այս պայմանների
առկայությունը համապատասխանում է կուլտուրա-
կան բույսերի պահանջներին թե սերմացուների ծլելու
և թե նրանց հետագա զարգացման ժամանակ:

ՅԵՐԿԸ, ՏԱՓԱՆՈՒՄԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՄՆԵՐԻ ԿՈՒՆՏՐՎԱՑԻԱՆ

Այսպես, ուրեմն, դաշտային գյուղատնտեսական
կուլտուրաների մշակման գործում հիմնական մոմեն-
տը վարելն է: Վարելու գործով պետք է հետաքրքրվեն
և տրակտորիստները, և՛ բրիգադիրները, և՛ կոմբայնա-
վարները, և՛ բոլոր նրանք, ովքեր վորևէ կապ ունեն
հացաբուլսերի բերքի բարձրացման հետ: Իրա համար
հարկավոր է ուշադրությամբ հետևել, վոր գութանը
գործի կանոնավոր կերպով, այսինքն այնպես, վոր
շուռ տված հողաշերտերը պառկեն հարթ հորիզոնաձև
հիմքի վրա: Վարի ալիքաձև հիմքն արդեն նշան է, վոր
գութանը կանոնավոր սարքավորված չէ. դրա հետե-
վանքով ել առաջանում է բերքի նվազում:

Ինչ վերաբերում է տրակտորային գութանին, նա
լավ կաշխատի միայն այն դեպքում, յերբ կարգին
սարքավորված է և կանոնավոր ել կարգավորվում է:

Իրա համար անհրաժեշտ է, վոր՝ 1) շրջանակը դրո-
ված լինի հորիզոնական դիրքով. 2) խոփերի բերան-
ները, ստուգման դեպքում, իրենց բոլոր մակերեվութ-
ներով կպած լինեն հողի յերեսին. 3) հետևի դաշ-

տալին տախտակի հետին ծայրը 1,5—2 սանտիմետրի չափ բարձր լինի հողի յերեսըց. 4) դիսկի (սկավա-
ռակի) կենտրոնը գտնվի խոփի յեզրին, իսկ թե վոր
դիսկի տեղ դանակ է հաստատված, ապա դանակի
բերանը 3—5 սանտիմետրի չափ բարձր լինի խոփի
յեզրից. 5) գուլթանի շփվող մասերի յուղումը կա-
տարվի չորս ժամ աշխատելուց հետո:

Գուլթանը կարգին չի աշխատում հետևյալ դեպքե-
րում.

1. յեթե նրա կորպուսը (մարմինը) դժվարությամբ
է խրվում հողի մեջ (այս յերևույթի պատճառն այն
է, վոր խոփերը գուլացել են, վոր գուլթանը շատ
բարձրից է կցված տրակտորին, վոր դիսկավոր դա-
նակները շատ առաջ են դուրս ցցված և «թավալում
են» գուլթանը).

2. յերբ գուլթանը, շատ ծայրից կցված լինելով
տրակտորին, վարում է «քթով».

3. յերբ գուլթանը «կողքանց» է գնում. դա նրանից
է, վոր նրա՝ տրակտորի հետ կցումը քարշային դի-
մադրության գծով չի կատարված, և դաշտային տախ-
տակը խրվում է ակոսի պատերում. հետևաբար՝ կցումն
անել այն հաշվով, վոր տրակտորի քարշագիծը համ-
ընկնի գուլթանի քարշային դիմադրության գծին. բա-
ցի գրանից, անհրաժեշտ է դաշտային տախտակի տակ
տափողակ (շայբա) դնել վերջին բուրի (հեղույսի)
մոտ, վորով նա ամրացված է կորպուսին.

4. յերբ գուլթանը դանդաղ է ընթանում՝ դաշտային
տախտակի մաշվածության պատճառով, յերբ կանգնակը
(ստոյկան) ճկված է, յերբ շրջանակը ծռված է.

5. յերբ, ծղնտախառն գովազբով հողը վարելիս, գու-
լթանի կորպուսը խցվում, լցվում է. այս դեպքում լավ է
դիսկավոր դանակները սարքել այնպիսի բարձրության

վրա, վոր ծղնտը չփաթաթվի վոչ յեղանների և վոչ էլ
տափողակների վրա.

6. յերբ ավտոմատը, նրա պարանը յերկար ժամանակ
ձգված պահելու հետեվանքով, աշխատում է անկանոն-
այս դեպքում պարանը թուլացնում և, ավտոմատի
մաշված ժանիքների տեղ նորերն են անցկացնում. յեթե
ավտոմատի զսպանակը հարկավոր չափով չի լարված,
ապա տրակտորը պետք է շատ ուժ գործ դնի՝ գու-
լթանի կորպուսը հողի միջից դուրս հանելու համար. այս
դեպքում պետք է ավելի ուժեղ լարել զսպանակը:

Վարն ավարտելուց հետո մենք չպետք է հանգստա-
նանք: Ինչքան էլ լավ վարված լինի արտը, բարձր բերք
ստանալու համար միայն գրանով չի կարելի բավակա-
նանալ, վորովհետեով վերջնական փխրացումը դեռ չի
կատարված: Ավելի մանր փխրացնելու համար կիրա-
ռում են տափաններ. այս տափանումը կոչվում է հողի
լրացուցիչ փխրացում:

Հողի լրացուցիչ փխրացումն անհրաժեշտ է կատարել,
վորպեսզի՝ հողի գոլորշիացումը դադարեցնելու նպա-
տակով՝ անոթների մազականությունը վոչնչացվի:
Տափանումը կատարում են գարնան վարից հետո, վոր-
պեսզի հողը չգոլորշիանա: Տափանելու հետ միասին,
գարնան չորային յեղանակին, գլանակում են ցանած
արտը: Գլանակելու միջոցով խոնավությունն արհես-
տականորեն հողիներքին շերտերից յերես է դուրս գալիս.
գլանակումից հետո անմիջապես տափանում են, վոր-
պեսզի հողի վերին շերտերի խոնավությունը պահպան-
վի, չգոլորշիանա: Մշակված արտը տափանում են անձ-
րեվներից հետո գոյացած կեղևը քանդելու համար:
Աշնանացան ցանքսերը տափանում են ձնհալքից հետո.
բազմամյա խոտերը տափանում են գարնանը, հնձելուց
հետո: Շարատունկերից ազատված հողերը փխրացնում

են գարնանը, հատիկավոր հացաբույսեր ցանելուց առաջ: Տափանելու միջոցով հողից հեռացնում են չորացած մոլախոտերը:

Բայց միայն տափանելով չի կարելի վերջնականապես մշակել և մաքրել հողը մոլախոտերից. դրա համար կիրառվում են կուլտիվատորները: Կուլտիվատորով կատարված դաշտամշակութունը «կուլտիվացիա» յե կոչվում: Կուլտիվացիայի ու վարելու տարբերությունն այն է, վոր առաջինի միջոցով դաշտը մշակվում և մոլախոտերից մաքրվում է առանց հողաշերտերը շուռ տալու:

Կուլտիվատորները կիրառվում են խոտակալած հողը վարելու ժամանակ (բազմամյա խոտերի կուտակները), խոզան անմիջապես և մակերեսաբար փխրացնելու համար՝ աշնան վարը դեռ չսկսած: Բացի վերը մատնաընշվող համատարած մշակումներից, կուլտիվատորներով մշակում են շարատունի կուլտուրաների շարքամեջերը, փնջավորում են, վորով վորոշ նպատակի յեն հետեվում՝ ստեղծել լավագույն բարեհաջող պայմաններ (ապահովել խոնավությամբ, մաքրել մոլախոտերը)՝ շարատունիների զարգացման համար:

Հողը հարթ գլանակով գլանում են այն նպատակով, վոր արագանա ծիւրերի յերեվան գալը և հարթվի արտերի մակերեսը խորավար տեղերում:

ՅԵԼԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Այժմ ջուկ-ջուկ ծանոթանանք աշնանացան ու գարնանացան կուլտուրաների համար հատկացված հողերի մշակման հետ:

Աշնանացան կուլտուրաները ցանվում են ցել արված արտերում, և վորովհետև այսպիսի հողամշակման գլխավոր նպատակը մոլախոտերի հեռացումն է, ինչպես

նայել խոնավության կուտակումն ու պահպանումը հողում, ապա ուրեմն մեր Ազով-Սևծովյան յերկրամասի տարբեր մասերում կիրառվում են և՛ տարբեր տեսակի ցելեր: Նայած տեղումների քանակին, չորային ուսյուններում՝ ու այն վայրերում, ուր խոնավացումը կայուն չէ, հանձնարարվում են այսպես կոչված մաքուր (ապրիլյան և մայիսյան) և կուլիսային ցելերը, թաց ուսյուններում՝ բռնված և շարատունի ցելերը:

Մաքուր ցելեր կոչվում են նրանք, վորոնք ամբողջ ամառը զբաղված չեն յեղել վոչ մի կուլտուրայով, վորպեսզի խոնավությունը ծախսված չլինի:

Մաքուր ցելերը, վարելու ժամանակին նայած, ստորաբաժանվում են սև ցելերի՝ աշնանը վարած (աշնանացանն անելուց մի տարի առաջ), վաղ ցելերի (գարնանը վարած, ապրիլին կամ մայիսին), միջին (հունիսյան) և ուշ (հուլիսյան) ցելերի, բռնված ցելերի, շարատունի և կուլիսային ցելերի:

Ազով-Սևծովյան յերկրամասի չորային ուսյունների համար, բերքի տեսակետից, լավագույն ցելեր հանդիսանում են սև և վաղ ցելերը: Ըստ վորում վաղ ցելերը գերադասելի յեն սև ցելերից, վորովհետև նրանց խնամքն սկսվում է մայիս ամսից, այնինչ սև ցել անելու համար յերկու ավելորդ մշակում է պահանջվում: Սև ցելերը վարում են 17—22 սանտիմետր խորությամբ, իսկ վարելուց հետո, աշնանը, չեն տափանվում, այլ թողնվում են կունձղերով (խոշոր կտորներով): Վաղ այսինքն ապրիլյան և մայիսյան, ցելերը տափանվում են վարելուց հետո իսկույն:

Բռնված ցելն ոգտագործվում է վորևե վաղահաս կուլտուրա ցանելու համար (յեզիպտացորեն, սորգո, վիկ՝ գարու և վարսակի հետ խառն՝ իբրև խոտ կամ սիլոս): Զբաղված ցելի վարը կատարվում է աշնանից:

33/9



Բռնված ցելերի բույսերը ցանվում են նրանց համար սովորական ժամանակին: Նրանց բերքահավաքը կատարվում է հունիսի վերջին կամ հուլիսի սկզբին, վորից հետո ցել արված հողամասը նորից է վարվում և տափանվում վորպես մաքուր ցել:

Շարատունկի ցելը, մինչև աշնանացան անելը, բռնվում է յեգիպտացորենով, արևածաղիկով, բոստանով, արմատապտուղներով և ուրիշ շարատունկ կուլտուրաներով: Շարատունկի ցելում աշնանացան կուլտուրային ցանում այն ուայոններում, ուր բավականաչափ խոնավութուն կա ինչպես կուլբանում և ավելի հարավ:

Կուլխալից ցել է ասվում նրա համար, վոր գրանք կուլխաների յեն նման. այս կուլխաները կազմում են յեգիպտացորենի կամ արևածաղկի այն ցողունների շարքերը, վոր թողնված են ձմեռելու համար: Արևածաղիկ կամ յեգիպտացորեն ցանելիս թողնում են շարքամեջեր այնպիսի լայնությամբ վորոնց միջով անցնել կարողանան մի կամ յերկու շարքացան:

Այս դեպքում աշնանացան ցորենը ցանում են ջարքամեջերում մինչև շարքատունկի բերքահավաքը:

Արևածաղկի գլուխները կամ յեգիպտացորենի սիմինդրը քաղում են հասնելուց հետո, իսկ նրանց ցողունները թողնում են արմատի վրա մինչև գարուն՝ ձյունը պահելու համար. դրա շնորհիվ է, վոր աշնանացաններն ավելի հեշտությամբ են տանում ձմեռվա ցուրտը, և հողն էլ ավելի խոնավութուն է կուտակում:

Ցելի մշակումն ավարտում են աշնանացանն անելուց յերկու շաբաթ առաջ:

Այժմ խոսենք դարնանացան կուլտուրաների մշակման մասին:

Ցերք դարնանացանը ցանվում է շարատունկ հողերում, այս վերջիններն ամբողջ ամառը փխրունացվում

են և մուլխոտերից մաքրվում, դրա համար բավական է գարնանը, շարատունկերից ազատված հողը, ծանր տափանով փխրունացնել՝ այնտեղ դարնանացանն անելու համար:

Սոգանավար արված հողում դարնանացան անելիս անհրաժեշտ է հող տանել այն մասին, վոր արտը մուլխոտերից մաքրվի, ապա ստեղծել այնպիսի պայմաններ, վորոնք նպաստելին խոնավության ու սնունդարար նյութերի կուտակման:

Գարնանացան կուլտուրաների համար հողի լավագույն մշակումն աշնանավար անելն է: Ըստ վորում Ազով-Սևծովյան յերկրամասի, հյուսիսային մասում աշնանավարն արվում է ոգոստոսին, իսկ հարավային մասում՝ սեպտեմբերին, 15 սանտիմետրից մինչև 22 սանտիմետր խորությամբ (արմատապտուղների համար վարի խորությունն ունենալու յե 22 սանտիմետր): Այս դեպքում, մինչև ցրտերի բռնելը, խոգանավար հողերում կատարվում է որգանական նյութերի քայքայումը, հուսուսի (բուսահողի) գոյացումը և նրանից էլ՝ սննդարար ազերի արտազատումը: Իրա հետ միասին հողի բաղադրության հանքային մասերից առաջանում է սննդարար աղերի արտազատումը. այս պրոցեսին նպաստում է հողի ամբողջ ձմեռ սառած մնալը. հենց դրա համար է, վոր վարած հողը ձմեռը թողնում են առանց տափանելու, կուղծերով: Այսպիսի մշակման հետեվանքով հողի աղտոտվածությունը մի քիչ նվազում է, վորովհետև ծիլ արծակած մուլխոտերը, մերկացած արմատներով խորը թաղվելով հողում, վոչնչացնում են:

Իացի դրանից, աշնանավարն ուշանալու դեպքում, դաշար ծածկվում է մուլխոտերով: Նման դեպքերում անհրաժեշտ է հողի նախացան մշակում կատարել

եքսաիրպատորով առանց հողաշերտերը շուռ տալու: Հողի մշակման վերոհիշյալ բոլոր յեղանակները մեծ նշանակութիւն ունեն հացահատիկի բերքը բարձրացնելու գործում, յեթե միայն իր ժամանակին և սեղմ ժամկետում կատարվեն անհրաժեշտ ազրոտելնիկական միջոցառումները: Ազրոտելնիկայով նախասամանված աշխատանքների թեկուզ աննշան մի մասն անկատար թողնելու կամ կատարումն ուշացնելու հետեւանքով բերքատուութիւնը կպակասի, իսկ հաճախ նաև ամբողջ ցանքը կվոչնչանա: Ուշ կատարված աշխատանքի բերքատուութիւնը վոչ միայն պակաս չե վաղ գարնանավարի բերքատուութիւնից, այլ և ավելի մեծ է:

ՅԱՆԵԼՈՒ ՍԵՐՄԱՅՈՒՅԻ ՆԱԽԱՂԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ԱՅԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բերքի բարձրացման գործում, հողի մշակումից հետո, մյուս կարեւոր գործոնը ցանելու սերմացույի պատրաստումն է հանդիսանում: Լավ սերմացուն է միայն, վոր կարող է լավ բերք տալ: Դրա համար, սերմացուն պատրաստելիս, անհրաժեշտ է մեծագույն բերք խոտացող և ապահովող հետեւյալ պահանջները ներկայացնել:

ա) սերմացուն պետք է լինի տեսակավոր ու տվյալ ռայոնի համար ստանդարտային.

բ) սերմացուն պետք է լինի ժանգակայուն (Ստավրապոլկա, հիբրիդ (խառնածին) 922—622/2, Կենրիդի Ծուլկաստեր, և ուրիշները.

գ) սերմացուն պետք է անցկացնել քամհար մեքենայից, տեսակավորող մեքենայից և արիերից (սերմազտիչ գործիք):

Քամհարը սերմացուն մաքրում է խառնուրդներից, տեսակավորող մեքենան տեսակավորում է սերմացուն ըստ քաշի, արիերը՝ ըստ յերկարության:

Քամհարներն իրարից տարբերվում են գլխավորապես իրենց մաղասարք հաստոցի կառուցվածքով: Կան քամհարներ, վորոնց հաստոցը ձոճվում է յերկայնքին, կան և այնպիսիները, վորոնք լայնքին են ձոճվում: Յերկայնքի ձոճման ժամանակ քամումը կատարվում է արագ, քամհարն աշխատում է ավելի արտադրողաբար, քայց մաքրում է վոչ այնքան կատարելությամբ, ինչպես լայնքին ձոճվողը: Ասորյա աշխատանքում ընդունված է յերկայնքի ձոճվող «Կլեյտոն» № 5 քամհարը:

Քամհարից հետո սերմացուն պետք է անց կացնել տեսակավորող «Տրիումֆ» մեքենայից և արիերից:

Վորպեսզի սերմացուն մաքրող մեքենաները կարգին աշխատեն, անհրաժեշտ է, վոր նրանք կանոնավոր կերպով սարքադրված լինեն:

Այդ մեքենաների մեջ ավելի բարձր արիերն է: Այս մեքենան աշխատանքի համար սարքադրելիս, հարկավոր է ուշադիր լինել, վոր շրջանակը հորիզոնական դիրք ունենա: Ընդունող շերտի (կովշի) մեջ սերմացուն պետք է լցվի հավասարաչափ:

Առանձնապես կարեւոր է կանոնավոր սարքադրել երի փողակը (ժոլոք):

Տրիերով աշխատելիս հարկավոր է պահպանել հետեւյալ կանոնները:

1. Տրիերից անցկացնել տեսակավորված սերմացուն.
2. Նախապես մաքրել արիերի փոշին.
3. Անվակալը (վտուլկա), առանցքակալը և շփվող մյուս մասերը յուղել.
4. Բռնակը յերբեք դեպի հետ չպտտել.
5. Յեթե արիերը կտարում է սերմացուն, նշանա-

կում է, վոր փողրակի պատը շատ մոտ է հաստատու-
ված. այդ դեպքում հարկավոր է սարքադրող լծակի
ոգնությամբ նրան մի քիչ հեռու տանել:

6. Յեթե յերկար սերմացուների հետ դուրս են
թափվում նաև կարճերը, դա նշանակում է, վոր փող-
րակն իր քերիչներով շատ բարձր է հաստատված:
Սարքադրող լծակի ոգնությամբ հարկավոր է փողրակն
այնպես դարձնել, վոր քերիչները ներքև իջնեն. իսկ
թե վոր քերիչները խիստ ցած են դրված. այդ դեպ-
քում առաջին տեսակի սերմացույի մեջ կարող են
ահագին քանակությամբ ընկնել նաև չտեսակավորված
սերմացուներ:

7. Տրիերում հաստատվող մաղերը կախում ունեն
այն սերմացուների հաստությունից, վորոնք տեսակա-
վորվելու յեն: Սովորաբար յուրաքանչյուր տրիերի
հետ տրվում է չորս մաղից բաղկացած սարքում (նաբոր)

8. Հարկավոր է ուշադրությամբ հետևել, վոր խո-
ղանակները մաքրեն մաղի ծակերում խրված սերմա-
ցուները:

9. Պետք է խստիվ հետևել, վոր տրիերին սպասար-
կողներն զգուշ լինեն և բռունցքով թմբուկին չխը-
փեն, վորովհետև դրանից թմբուկը կարող է ձկվել,
իսկ թմբուկը նորոգելը շատ դժվար է:

Յանելու համար վերջնաում են տրիերից անցած
1-ին, 2-րդ և 3-րդ տեսակի սերմացուները:

Տրիերով տեսակավորված սերմացուն պետք է ախ-
տահանվի ֆորմալինով կամ փոշկորվի մինդեղավոր
թույներով:

Բացի դրանից, սերմացուները պետք է ստուգվեն
ըստ իրենց, ծլունակության:

Ստորև բերվում են դաշտային զանազան կուլտու-
րաների ծլունակության նորմերը.

| Կուլտուրաների անունը | Ծլունակու- թյան նոր- մերը % -ով | Կուլտուրաների անունը | Ծլունակու- թյան նոր- մերը % -ով |
|-------------------------|---------------------------------------|---------------------------------|---------------------------------------|
| Յորեն | 92 | Արևածաղիկ | 95 |
| Հաճար | | Սոյա | 94 |
| Գարի | | Տղանիփ | 85 |
| Վարսակ | | Սորգո | 75 |
| Յեգիպացորեն | | Սուգանկա ձակնդեղ շաք. և կերի | |

Սերմացուները ծլունակությունը վորոշվում է վա-
ղողք, մինչև ցանելը:

Յեթե դաշտային տնտեսությունը դրված է կանո-
նավոր հիմքերի վրա, ապա այն հարցը, թե ինչքան
սերմացու յե հարկավոր մի հեկտար ցանքսի համար,
լուծվում է համաձայն այն տվյալների, վոր ստացել
են ծլունակության տեսակետից սերմացուն փորձարկ-
ման յենթարկելով:

Թե վոր սերմացույի ծլունակությունը նվազ է, այդ
դեպքում դրա համեմատ ել ավելի սերմացու յե հար-
կավոր մի հեկտար ցանքսի համար:

Ստորև առաջ ենք բերում Ազով-Սևծովյան յերկ-
րամասի ուայոնների համար հարկավորված սերմա-
ցույի նորմերը (տես եջ 24)՝ 1 հեկտարի համար՝
ցենտներով, յեթե սերմացույի ծլունակությունը նոր
մալ է (ինչպես այդ ցույց է տրված առաջին աղյու-
սակում):

Ինչ վերաբերում է աւանանցան ցորենը ցանելու
ժամկետին, ապա դրա լավագույն ժամանակն է՝ յերկ-
րամասի հյուսիսային ուայոններում (Մյասնիկյան,
Յեգորիկի յեվ այլն) ոգոստսի վերջերից մինչեվ
սեպտեմբերի 20-ը, յերկրամասի կենտրոնական մասում
(Կրասնոդար, Մայկոպ, Արմավիր յեվ այլ ուայոններ)
սեպտեմբերի 2-րդ կեսից մինչեվ հոկտեմբերի սկիզբը.

| Ուսումնական տարիները | Փարսանյացիներ | Աշխուհիներ | Փարսանյացիների քանակը | Աշխուհիների քանակը | Համար | Փարսանյացիների քանակը | Յեղևրոսի սիրելիքը | Կրթիկ | Արևածաղիկ |
|----------------------|---------------|------------|-----------------------|--------------------|-------|-----------------------|-------------------|-------|-----------|
| Ազգերի | — | 1,5 | — | — | — | — | 0,3 | — | — |
| Արամյան | — | 1,3 | 1,45 | — | — | 1,4 | 0,3 | — | 0,16 |
| Հայկական | — | — | 1,4 | — | — | 1,4 | 0,3 | — | — |
| Ազգերի | — | 1,3 | — | 1,4 | — | 1,5 | 0,3 | — | — |
| Անապատի | — | 1,3 | 1,3 | 1,4 | — | 1,2 | 0,3 | — | 0,16 |
| Բելուրեշեն-սկի | — | 1,5 | 1,5 | 1,5 | — | 1,5 | 0,3 | — | 0,16 |
| Հունական | — | 1,5 | 1,5 | 1,5 | — | 1,5 | 0,3 | 0,3 | 0,16 |
| Յեղևրոսի | 1,25 | 1,4 | 1,25 | — | — | 1,3 | 0,25 | 0,2 | 0,14 |
| Կրասնոդարի | — | 1,4 | 1,45 | — | — | 1,4 | 0,3 | 0,2 | 0,16 |
| Փոքրաշեն-կյուչի | — | 1,4 | — | 1,4 | — | 1,4 | 0,3 | — | 0,16 |
| Մայկույի | — | 1,5 | 1,5 | 1,5 | — | 1,5 | 0,3 | 0,2 | 0,16 |
| Մյասիկ-յանի | 1,25 | 1,3 | 1,3 | — | 1,3 | 1,25 | 0,25 | 0,2 | 0,15 |
| Ռյազանսկի | — | 1,5 | 1,5 | 1,5 | — | 1,5 | 0,3 | — | 0,16 |
| Նովոսիսկի | — | 1,3 | — | 1,4 | 1,3 | — | 0,3 | — | 0,16 |
| Տուրապետի | — | — | 1,5 | — | — | 1,5 | 0,3 | — | — |
| Սոչի | — | — | — | — | — | — | 0,3 | — | — |

Ծանոթություն . Փնջավորված (բուկետիտով) հողում ցանքսի նորմը սահմանվում է այսպես .

Ըստ յեգիպացորենի՝ յուրաքանչյուր ուսումնական տարի կրկնակի չափը, վոր սահմանված է նույնիսկ ուսումնական տարիների ցանքսի համար (50—60 կիլոգրամ յեգիպացորենի) սիրելիքը (մեկ հեկտարում) .

ըստ արևմտադիկի՝ յուրաքանչյուր ուսումնական տարի նորմն ավելանում է 4 կիլոգրամով (մեկ հեկտարին 20 արևածաղիկ) :

Յերկրամասը կենսոնական ուսումների խոնավոս քրջանում (Սոչի, Ադլեր, Տուրապետ յեվ այլն) ցանում են հոկտեմբերին :

Աւանագան հանարը ցանում են ոգոսոսի վերջին յեվ սեպտեմբերի առաջին կեսին :

Աւանագան զարին ցանում են աւանագան ցորենի հետ սիւժամանակ, այսինքն հոկտեմբեր ամսին :

Փարսանյացան հասկավոր կուլտուրաների (ցորեն, վարսակ, դարի) ցանքսը յերկրամասում պետք է կատարվի յոթնորյա ժամկետում : Յանել հարկավոր է ձյունը զնալուց հետո իսկույն, հենց վոր կարելի լինի շարքացաններով աշխատել :

Պյուղատնտեսական կուլտուրաներ ցանելիս պետք է նկատի ունենալ վոչ միայն ցանքսի նորմերը, է ժամանակը և ցանքսն ավարտելու ժամկետը, այլև ցանելու յեղանակը և սերմացուն ինչ խորությամբ հողի մեջ թաղելը :

Հացահատիկի առատ բերք ստանալու համար անհրաժեշտ է ցանքսը կատարել տրակտորային ու ձիաքարչ շարքացաններով : Շարքացանն իր խոփիկներով սերմացուները ձգում է հողի մեջ կանոնավոր շարքերով և հարկավոր խորությամբ :

Սերմացուները միանգամայն հավասարաչափորեն դասավորվում են արտում թէ հորիզոնական և թէ ուղղաձիգ (դեպի խորքը) : Բացի դրանից, շարքացանով ցանելիս, կարելի յե ճշտությամբ կարգավորել ցանվող սերմացուների քանակությունը, մի բան, վոր անկարելի յե շաղացանով ցանելիս :

Շարքացանով կատարված ցանքսի ծրվերը յերևում են միաժամանակ ու միահամուռ : Չնայած, վոր (շաղացանի համեմատությամբ) շարքացանով պակաս քանակությամբ սերմացու յե ցանվում, բերք ստացվում է շատ ավելի :

**ՅԱՆՔԱՆ ԶԱՐԲԱՅԱՆՈՎ, ՊԱՅԲԱՐ ՅԵՂԱՆԱԿԻ
ՎԱՏ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԴԵՍ**

Շարքացանով ցանելիս, նախ ցանվող նյութի տրնտեսում ե արվում և ապա՝ ավելի բերք ե ստացվում բայց այդ լինում ե այն ժամանակ, յերբ մեքենան, այսինքն շարքացանը գործում ե կանոնավոր կերպով, յերբ ցանող ապարատը ճշտված, ստուգված ե: Հարկավոր ե ուշի ուշով հետեվել, վոր աշխատանքի պահին մեքենան բացառներ (բաց թողած տեղեր) չթողնի այնքան սերմացու, վորքան սահմանված ե, այսինքն՝ պահպանե սերմացույի սպառման այն նորմը մի հեկտարի համար, վոր հանձնարարվում ե տվյալ ուսյոնի համար:

Այս նորմի գերածախսումով ավելորդ սերմացու յե սպառվում. սրանից ցանքսը խտանում ե և կարող ե փասակար հետեվանք ունենալ:

Յերբ սերմացույի հարկավոր նորմը չի ցանվում, ծիլերը ցանցառ են լինում, հետեվաբար բերքն ել վոչ լիամաս: Իրա համար ցանքսն սկսելուց առաջ հարկավոր ե շարքացանը ճշտիվ սարքադրել, ինչպես այդ պահանջում ե նորմը. սրա համար ոգտվում են ցանքսի կարգավորիչով (ռեգուլյատորով):

Շարքացանը կանոնավոր կերպով աշխատեցնելու համար անհրաժեշտ ե հետեվել այն կանոններին, վոր սահմանված են տրակտորային շարքացանները խնամելու համար:

Այս կանոններն են.

1. Յանիչ ապարատի կանոնավոր սարքադրումը. նախնական սարքադրումը կատարվում ե շարքացանի շարժրնթաց անվի պտտման միջոցին՝ ¹/₂₀ հեկտար

տարածության վրա ցանված սերմացույի քանակը հաշվառելու միջոցով:

Աշխատանքի պրոցեսում պարբերաբար ստուգվում ե սարքադրման կանոնավորությունը. դրա համար կըշուում են սերմացուն և չափում են այն տարածությունը, ուր ցանված ե սերմացուն: Սերմացուների բաշխումն ակոսներում ստուգվում ե բրիգադիրի ձեռքով աշխատանքի 2—3 ժամը առնվազն մի անգամ յուրաքանչյուր շարքացանի նկատմամբ:

2. Շրջանակը պետք հաստատված լինի հորիզոնաձև ու կարգավորվի կցովի ողակով ուղղածից ուղղութամբ:

3. Պետք ե հետեվել կարգավորիչ լծակին, վոր սերմացուն թաղվի հարկավոր խորության մեջ. բրիգադիր-արակտորիստն ե, վոր ստուգում ե սերմացույի հավասարաչափ և պահանջված խորությամբ թաղվելու կանոնավորությանը՝ աշխատանքի 2—3 ժամն առնվազը մի անգամ (բացի տվյալ մեքենան սպաարկող բանվորների՝ շարքացանի վրա ունեցած՝ մշտական հսկողությունից):

4. Անիվներն, աշխատանքի 4 ժամը մի անգամ, յուղվում են թանձր քսուքով կամ սոյիդոնով:

5. Յանիչ գլանի առանցքակալը 4 ժամը մի անգամ յուղվում ե ջրալի հանքային յուղով:

6. Հաղորդիչ ատամնավոր անիվների առանցքները 4 ժամը մի անգամ յուղվում են ջրալի հանքային յուղով:

7. Թե վոր ցանիչ ապարատների մեջ կողմնակի առարկաներ ընկնեն (գալկաներ, քարեր, լաթեղեն կտորներ և այն), նրանք կարող են ջարդվել: Անհրաժեշտ ե հետեվել, վոր սերմացուն մաքուր լինի: Աշխատանքից առաջ հարկավոր ե ստուգել, թե արդյոք

սերմացույի արկղում կողմնակի առարկաներ չեն ընկել:

8. Վերելակի (պողոտայի) լծակները կարող են կտորվել ամենից հաճախ այն դեպքում, յերբ միաժամանակ ոգտվում են և՛ ավտոմատիկ վերելակով և՛ ձեռքի լծակով: Յեթե վերելակը սարքին է, պետք է գործածել այն: Այդ դեպքում ձեռքի լծակը պետք է հանել սեկտորից: Յեթե ավտոմատիկ վերելակը սարքին է, առաջ հարկավոր է ծնկաձև գլանից հանել շարժաձողը (շատունը), ապա դնել ձեռքի վերելակի լծակը:

9. Իրականոր խոփերը կարող են կտորվել, յեթե շարքացանն, իջեցրած խոփերով, հետ տրվի, յեթե շարքացանն իջեցրած խոփերով կարճ շրջադարձ կատարի և, վերջապես, յեթե նա չափազանց խցված լինի քարերով ու թափոնքներով: Հետեվաբար իջեցրած խոփերով կարուկ շրջադարձ չկատարել, շարքացանի շարժընթաց վիճակում խոփերը չիջեցնել, շարքացան տանող տրակտորը հետ շտալ, տրակտորը տեղից արագ չբշել:

10. Յեթե դիսկավոր խոփերը սերմացույի հարկավոր նորմը չեն ցանում, դրա պատճառն այն է, վոր խոփը ներսից խցված է կամ սերմատար խողովակը լցված-փակված է: Այդ դեպքում հարկավոր է խոփերը մաքրել, ապա ստուգել քերիչների սարքադրման կանոնավորութունը, ուշի ուշով հետեվել, վոր սերմատար խողովակները չծովեն ու կողմնակի առարկաներով չխցվեն:

Սերմացույի ինչ խորությամբ թաղելու հարցը լուծելիս հարկավոր է ղեկավարվել հետեվյալ նկատառումներով: Վորջան խոշոր է սերմացուն, այնքան խորունկ պետք է թաղվի նա. վորջան մանր է սերմա-

ցուն, այնքան յերեսթաղ է լինում նա: Թե վոր հողը խոնավ է, սերմացուն պետք է յերեսթաղ արվի, իսկ թե վոր հողը չոր է, թաղվում է խորունկ: Կավախտոն և ընդհանրապես ծանր հողում սերմացուն յերեսթաղ են անում, իսկ ավազախտոն, այսինքն թեթև հողում, ախլի խորունկ են թաղում:

Ամենից ավելի բերք ստացվում է այն դեպքում, յերբ սերմացուն ըստ հնարավորության յերեսթաղ է արված (ավյալ ռայոնի համար):

Սերմացուն խորունկ թաղելու հետևանքով ցանքսը ուշ է հասնում:

Յերեսթաղ արված բույսերն ավելի լավ են թփավորվում: Ազով-Սևծովյան յերկրամասի համար սերմացուն թաղելու նորմալ խորությունը, վերը հիշատակված պայմանների կապակցությամբ, տատանվում է այս սահմաններում.

| | | | |
|------------------------|-----|-------|------------|
| Հաճարը | 2,5 | սմ. | խորություն |
| Յորեն | 2 | — 6 | » |
| Գարին և վարսակը | 2,5 | — 7 | » |
| Արևածաղիկը | 2,5 | — 5 | » |
| Յեպիպտացորենը | 3 | — 6 | » |
| Սոյան | 3 | — 6 | » |
| Ճակնդեղը (շաքարի կերի) | 0,5 | — 1 | » |
| Գարնանացան վիկը | 1 | — 4 | » |
| Մորգոն | 3 | — 16 | » |
| Կորնզանը | 2 | — 3 | » |
| Կարույա աովույաը | 1 | — 3 | » |
| Ծխախոտը | 0 | — 0,5 | » |
| Կարտոֆիլը | 5 | — 12 | » |

Կուլտուրական բույսերի բերքն ապահովելու համար պահանջվում է հետագա խնամք ևս: Աճի ժամանակ ցանքսը յենթարկվում է զանազան անբարե-

հաջող պատահարները, վորոնք համապատասխան ազրոտելնիկական միջոցառումների շնորհիվ կարող են վերացվել կամ մեղմանալ:

Փամանակի ընթացքում խանգարվում է հողի՝ բույսերի համար նպաստավոր՝ այն հատկութունը, վոր ստեղծվել էր նախացանքային մշակումով, հետևաբար հարկավոր է լինում վերականգնել այդ հատկութունը:

Շարատունի կուլտուրաներ մշակելիս հարկ է լինում ծիլերի նոսրացում կատարել, յերբ նրանք արդեն զարգացել են վորոշ աստիճանի: Ահա ինչու դաշտային բոլոր կուլտուրաները կարիք ունեն հետագա խնամքի. առանց այս հետագա խնամքին կուլտուրական բույսերի նորմալ զարգացումը կարող է խանգարվել, վորի հետևանքն այն կլինի, վոր կստացվի կամ թերի կամ վատ բերք:

Բացի այն բոլորից, ինչվոր ասացինք հացաբերքի բարձրացման մասին, անհրաժեշտ է նաև պայքար մղել յեղանակի արտաքին վատ ազդեցության դեմ: Դրանց թվին են պատկանում. 1) աննպաստ յեղանակը (յերաշտ, քամիներ և այլն), 2) մոլախոտերի չափազանց աճը, 3) դաշտային վաստատուների և հիվանդությունների բազմանալը:

Ինչ վերաբերում է յեղանակի ազդեցության, դա մեր ձմեռների մշտական փոփոխականությունն է ձյունի տեսակետից, ինչպես նաև ձմռան ջերմաստիճանի փոփոխականությունը, նրա ձյունհալքներով միջահատվող սառնամանիքները: Իրա հետեվանքն է, վոր՝

1. Ձյունհալքից գոյացած ջուրը սառելուց ծիլերը սառույցի կեղեվով են ծածկվում, դրա հետեվանքով ողջ ծիլերին չի հասնում ու նրանք վոչնչանում են:

Համատարած սառցային կեղեվը հեռացնելու համար

ողավոր գլանով գլանում են սառած հողի յերեսը և ջարդում են սառույցը:

2. Յերբ հողի յերեսի ջուրը սառչում է, տեղի յե ունենում ծավալի փոփոխություն, վորի հետեվանքով բույսերը դուրս են հրվում, մի բան, վոր նույնպես կորստաբեր ազդեցություն է ունենում գյուղատնտեսական բույսերի վրա:

Բույսերի այս դուրս հրումը վերացնելու համար արտի սառած յերեսը գլանում են ծանր գլանով:

Յերբ ծիլերը փրկված են դուրս հրվելու վտանգից և լավ ծիլ են արձակում, առաջացած կեղեվը հարկավոր է ջարդել ծանր տափաններով, շարքերը յերկու հետքի յերկայնքի տափանելով: Տափանել հարկավոր է մանավանդ խիտ բուսած ցանքսը: Ընդհակառակը, ցանցառ բուսած ու թույլ ծիլերը չպետք է տափանել:

Գարնանը, առատ անձրեվների ժամանակ, այսպիսի կեղև գոյանում է նաև գարնանացանի վրա: Այսպիսի դեպքում հանձնարարվում է ցանքսը տափանել մինչև ծիլեր արձակելը: Իրանով հեշտանում է բույսերի ծիլ արձակելը:

Շարատունի կուլտուրաների ծիլերը մշակելիս թույլ է տրվում կատարել նաև շարքամիջային փխրոնացում: Բույսերի միջի տարածությունը շարքերում և շարքամիջերում պետք է խստիվ պահպանվի շարատունի կուլտուրաներ մշակելիս:

Ցանելու ժամանակ շարքամիջերի տարածությունը պահպանել հեշտ է. դրա համար հարկավոր է ինչպես հարկն է սարքադրել շարքացանը:

Բայց սերմացունների բաշխումը շարքերում չի կարելի այնպես կարգավորել, վոր նրանք իրարից հավասար տարածության վրա ընկնեն շարքերում:

Շարատունկ կուլտուրաներն անհրաժեշտ ե նոսրաց-
նել, վոր բույսերը նորմալ զարգացում ունենան:

Զուգավոր (գնեդդովոյ) ցանքսում բույսերի շար-
քամիջերի ու շարքերի միջև յեղած տարածութիւնը
համարյա նույնն ե:

Այդ հանգամանքը հնարավորութիւնն ե տալիս ամբող-
ջապես անցնել շարատունկների մեքենական մշակմանը
բոլոր ուղղութիւններով, հրաժարվելով շարքերի մեջ
ձեռքով քաղհան անելուց: Սրանով վոչ միայն եժան ե
դառնում աշխատանքը, այլև արագ ե կատարվում: Սրա
շնորհիվ ե, վոր հնարավորութիւնն ե ստեղծվում սեղմ
ժամկետում ավարտել շարատունկ կուլտուրաների խնա-
մատարութիւնն աշխատանքը:

Շարատունկ կուլտուրաները ժամանակին մաքրելով
մուխխոտերից, հնարավորութիւնն ե տրվում կուլտուրա-
կան բույսերին լավ դարգանալ և առատ բերք հասցնել:

Իրա համար ե, վոր ներկայումս լարված պայքար ե
մղվում մուխխոտերի դեմ, վոչ միայն սերմացուները
գտելով, այլև խնամաշան մշակումով:

Ճարիների անկարգ և անկանոն դաշտամշակութիւն
հետեւանքով մեր Ազով-Սևծովյան յերկրամասի հողերն
աղտոտված են բազմաթիվ ու բազմատեսակ մուխխո-
տերով, վորոնք՝ կուլտուրական բույսերից խլելով խոնա-
վութիւնը, սնունդը և լույսը՝ իջեցնում են նրանց
բերքատվութիւնը միջին թվով ցանքսի տարածութիւն
մեկ յերրորդականի չափով:

Կուլտուրաների հաջորդականութիւնը կամ ցանքսա-
շրջանառութիւնը վոչ միայն անհրաժեշտ են գյուղա-
տնտեսական բույսերի աճման համար, այլև նպատում
են հողի մուխխոտերից մաքրվելուն:

Մուխխոտերի դեմ պայքարելու վերը հիշատակված
բոլոր միջոցները գյուղատնտեսական բույսերի համար

վստահելի պաշտպանութիւնն են հանդիսանում մուխ-
խոտերի մեծ մասի հանդեպ: Բայց կան այնպիսի մուխ-
խոտեր, վորոնց դեմ հարկավոր ե լինում պայքարել
հատուկ միջոցներ գործադրել:

Այս մուխխոտերին են պատկանում. 1) բազմամյա
փուշը, 2) դաշտաբաղեղը, 3) սեղը, 4) խոզուկը և մակա-
բույժ (պարագիտ) մուխխոտերը, ինչպես գաղձը (պովի-
լեկա) և ջրախոտը (գարագիխա): Փշի և դաշտաբաղեղի
դեմ պայքարում են միևնույն միջոցներով: Նոր արձա-
կած ծիլերը արմատով քաշում-հանում են, ցել արած-
կած դաշտերում նրանց ուժասպառ են անում հաճախակի
քաղհանելու միջոցով, վորովհետև առանց վերգետնյա
կանաչի չեն կարող դարգանալ նրա նաև արմատային
մասերը:

Համատարած ցանրսերում հարկավոր ե ձեռքով քաղ-
հանել կամ հնձել բույսերը ծաղկման սկզբում և թույլ
չտալ, վոր սերմերը հասնեն:


Սեզի դեմ պայքարը հնարավոր ե կրկնակի մշակու-
մով, վոր կայանում ե հետեւյալում. վարած դաշտը
մի քանի ուր թողնում են առանց տափանելու, վորպեսզի
սեզի վերարմատները չորանան: Այնուհետեւ վերար-
մատները հեռացվում են տափանների միջոցով. դրա
համար դաշտը տափանվում ե և՛ լայնքին և՛ յերկայն-
քին: Տափանումը կրկնում են միքանի անգամ ամբողջ
ամառվա ընթացքում, ամեն անգամ, յերբ վերարմատ-
ները նոր ծիլեր են արձակում: Այս արտում աշնանը
կարելի յե աշնանացանքս անել:

Չորային ուայոններում սեղոտ հողամասը վարում են
բերքահավաքից հետո ե թողնում են կուղձերով, առանց
տափանելու:

Մուխխոտ-մակաբույժները վերը հիշված մուխխոտե-
րից տարբերվում են նրանով, վոր պատուտվելով կուլ-

տուրական բույսերին, նրանցով ել սնվում են: Կուլ-
տուրական բույսերը մակաբույծների շնորհիվ ծյուր-
վում-նվազում են ու պակաս բերք են տալիս: Այսպիսի
մակաբույծներից են գաղձը և ջրախոտը:

Նրանց դեմ պայքարի միջոցառումները: Գաղձը հար-
վածում է կապուլտ առվույտին (յոնջա): Առվույտ ցա-



Նկ. 1. Ծխախոտի գաղձը (զառազիխա):

նած գաշտերի գաղձաշատ տեղերում փռել հաստաշերտ
ծղնոտ և այրել այն, ապա այդ տեղը նորից փորել և
դարձյալ առվույտ ցանել, վորը ձեռք բերել դրսից՝ գաղձ
չպարունակելու յերաշխիք ունենալով:

Ջրախոտ մակաբույծը լինում է զանազան բույսերի
վրա, բայց գլխավորապես արեվածաղկի և ծխախոտի
վրա: Նա շատ է վնասում արեվածաղկին, վորի արմա-
տին է կպչում-պատատվում:

Ջրախոտն արագ է տարածվում: Նրա սերմերը մանր
են. մի բույսից ստացվում է տասնյակ հազարներով սերմ:
Ջրախոտի սերմերն իրենց ծլունակութունը պահպա-
նում են 4—5 տարի շարունակ:

Հենց զրոս համար է հանձնարարվում, վոր այն տեղում,

ուր արեվածաղիկը բռնված էր ջրախոտով, 4—5 տարի
շարունակ չցանել փոշ արեվածաղիկ և փոշ ել ծխախոտ:

Յեթե արեվածաղկի կամ ծխախոտի արմատների
վրա յերեվա ջրախոտ մակաբույծը, նրան հարկավոր է
բաղհանել, վորպեսզի դրանով նվազի այս կուլտուրա-
ներին նրա հասցրած վնասը և առաջն առնվի հետա-
գայում հողի նույն մակաբույծով ծածկվելուն:

Ինչ միջոցառումներ վոր կիրառվում են արևածաղկի
մակաբույծ-ջրախոտի դեմ, նույնը դործադրում են
նաև ծխախոտի մակաբույծի դեմ:

Բացի դրանից, ցանում են արևածաղկի ջրախոտա-
կայուն տեսակները, վոր բուսցրել է Կրասնոդարի
ձիթահան Ինստիտուտը:


Հաճախ յավ նշաններ ունեցող հացաբույսերի բերքը
50 և ավելի տոկոսով պակասում է ժանգ կոչված
հիվանդության պատճառով: Ժանգի դեմ պայքարելու
համար պետք է ցանել ժանգակայուն տեսակի ցորեն՝
ստավրապոլկա և այլն (ինչպես սկզբում ասել ենք):

Այժմ միքանի խոսք ասենք գյուղատնտեսական
կուլտուրաների այն վնասատուների և հիվանդություն-
ների մասին, վորոնք հսկայական վնաս են հասցնում
մեր գաշտերին: Հագվագյուտ չեն այն տարիները,
յերբ մրիկը (գոլովնյա) վոչնչացնում է հացահատի-
կավոր բերքի մինչև 30%-ը: Պակաս վնաս չեն հասց-
նում նաև միջատները, ինչպես, որինակ, մորեխը,
գաշտային թիթեռների թրթուրները և ուրիշները:

Այս բոլորը պարտադրում է հատուկ ուշադրություն
դարձնել ցանքսերին և պահպանել նրանք հիվանդու-
թյուններից և վնասատուներից:

Գյուղատնտեսության այն վնասատուները, վորոնց
դեմ պայքարելու համար հատուկ միջոցառումներ չեն
կիրառվում, կարելի յե յերկու խմբի բաժանել: Առա-

Չին խմբին պատկանում են նրանք, վորոնց վոչնչաց-
 նելը կապված է խոզանը՝ իր մոլախոտերով ու հնձից
 հետո թափված հատիկներով միասին՝ վարելուն հետ-
 մյուս խումբը կազմում են նրանք, վորոնց զարգաց-
 ման համար վարած ճողը խոչընդոտ է հանդիսանում,
 վորովհետև նրանց զարգացումը հողումն է անցկենում:
 Յեթե լավ գիտելու լինենք, կտեսնենք, վոր խոզանում,
 կոճղուկների ներսում «սղոցող» միջատի թրթուրներն



Նկ. 2. Հացաբույսերի սղոցիչը յեվ նրա ձագերը:

են ձմեռում: Ապա այս թրթուրն ապրում է նոր հասկավոր հացաբույսերը ցողուններում և սնվում է ծղոտի պատերի հյուսվածքներով: Սրանով խանգարվում է հացահատիկի նորմալ ձեվավորումը, նա սկսում կժղել:

Բացի դրանից, թրթուրը բերքահավաքից առաջ սղոցում է ցողունների վարի մասը, վորի հետևանքով ցողունը կտրվում ու բերքահավաքի ժամանակ չի ճանկվում: Դա նշան է հացաբույսային սղոցողի ներկայութանը:

Բացի դրանից, թրթուրը բերքահավաքից առաջ սղոցում է ցողունների վարի մասը, վորի հետևանքով ցողունը կտրվում ու բերքահավաքի ժամանակ չի ճանկվում: Դա նշան է հացաբույսային սղոցողի ներկայութանը:

Ցանքսի՝ շվեղական ճանճով վարակված լինելու նշանն այն է, վոր կենտրոնական տերեվը թառամում և դեղնում է: Հետենյան ճանճի թրթուրը թափանցում է հասկավոր հացաբույսերի ծիլերի տերեվապատյանը և բույսի ցողունից ծծում է նրա հյութերը: Բույսը դեղնում է, ու այն տեղում, ուր թրթ-

թուրն է զանվում, ցողունը ձկվում է: Այդ է պատճառը, վոր արտը տավարի վոտքերով կոխկրտածի տեսք է ունենում:

Բացի դրանից, մոլախոտերի վրա զարգանում են հացաբույսային ուտիճը, ինչպես նաև առևանագանի ու գարնանագանի բվիկները (սովկա):

Այս վերջիններն ահագին վնաս են հասցնում ցանքսերին:



Նկ. 3. Աշնանացանի վնասատուն—բվիկը (սովկան): Սովկայի թրթուրը լինում է հողում: Բույսը, վորի վրա լինում են մեծ մասամբ սովկայի ձվիկները:


վերը հիշված բոլոր վնասատու միջատները կարող են վոչնչացվել, թե վոր հուճը հավաքվելուց հետո խոզանը հերկվի. այդ հերկը պետք է անել յերկու նվազ. նախ՝ բերքը հավաքելուց հետո ազատված խոզանը մանր վարել (հնձից հետո խոզանավար), վորպեսզի թափթփված հատիկները լավ ծլեն, և ապա՝

(մինչև աշնանացանների ծիլերը յերևալը) արար խոր աշնանավար անել:

Այսպիսով թափթփուկը վորպես մի խայծ կծառայի վնասատու միջատներին՝ աշնանացանի ծիլերը զարգանալու ժամանակ: Հետո այս ամբողջ մուլբույսը թափթփուկների ծիլերի հետ վոչնչանում են, յերբ հնձելուց հետո արար խողանավարվում, աշնանավար է լինում:

Սողանավարը, աշնանավարը և ցելերի մշակումը վոչնչացնում են նաև հետևյալ միջատներին.

1. Յեգիպտացորենի թիթեռի թրթուրին, վոր ուտում է յեգիպտացորենի ցողունի ներսի մասը և տակից կրծում է սիմինդրի վոտքերը: Վորպեսզի այս վարակը, հաջորդ ցանքսի վրա չանցնի, ցողունի մնացորդները և հիվանդ յեգիպտացորենի տերևներն սպառում են մինչև գարուն, այսինքն՝ ձմեռվա ընթացքում ծախսում են այն իբրև կեր անասուններին և իբրև վառելիք: Նմանապես հավաքում են ու այրում հնձից հետո ար-




Նկ. 4. Կուզկա-բզեզը, նրա թրթուրը, յեվ հարմայակը (յերկու անգամ մեծացրած):

տում մնացած թափթփուկները:

2. Արևածաղկի փայտածձվի (ուսաչ) թրթուրին, վոր ուտում է ցողունի միջուկը, հացաբույսերի բրբեղին (ժուժեխիցա), մետաղալար ճճվին, կոլզկուրեղեղին:


Հատուկ պայքարի միջոցառումներ պահանջող վնասատուներն են. 1) մորեխային վնասատուները, 2) մար-




Նկ. 5. Ասիական մորեխի («Տեսեխիակ») զարգացումը:




Նկ. 6. Մարդային թիթեռնիկ և նրա թրթուրները:




Նկ. 7. Թըթուրն արմատների վրա



Նկ. 7 ա. Կաղամբի կնճթավոր (դուրդունտիկ):



Նկ. 8. Սարգոստացիի վորդը:



Նկ. 9. Խլրգածղրիկ:

գերի թիթեռները, 3) ուտիճները, 4) լվերը, 5) ճակըն-
գեղի և կաղամբի կնճթավորը (դուրդունտիկ), 6) սարգոս-



Նկ. 10. Մոխրագույն պոնգական մուկ:




Նկ. 11. Գերմանիկ մուկ:

տայնի վորդը, 7) գաշտային ծղրիղը, 8) խլրգածղրիղը, 9) մըջլունները:

Մեկային հիվանդութիւնները մեծ նշանակութիւն ունեն գյուղատնտեսութեան մեջ, վորոնց տեսակները



Նկ. 12. Սովորական դաշտամուկ:



Նկ. 13. Թմբակեբա մուկ:

առանձին նկարները տրված են գրքի վերջին հավելվածում:

Դրանց դեմ կռվի միակ միջոցը թուխներն են: Այս բոլոր վնասատուներին փոչնչացնում են քիմիական թուխներով: Ինչ վերաբերում է կրծողներին, ինչպես պոնտական մուկը, գերմանամուկը (խոմյակ) և մուկը, ապա նրանք ամենատարածված ու վտանգավոր վնասատուներն են մեր արտերի համար:



Նկ. 14. Դաշտային լեմմինգ:

Պոնտական մկան և գերմանական մկան դեմ հաջողութամբ կիրառվում է խլորպիկրինը: Մկներին տալիս են թունավորված խայծեր:

ԲԵՐԲԱՀԱՎԱԲԸ ՅԵՎ ԲԵՐԲԱՀԱՎԱԲԻ ՄԵԲԵՆԱՆԵՐԸ

Բերբահավաքը գյուղատնտեսական աշխատանքի շատ կարեվոր պրոցեսն է, փորից փոչ-փոքր չափով

կախված է բերքի պահասումը: Հասկավոր կուլտուրաների բերքահավաքի ժամանակը վորոշվում է նրանց հասունությամբ:

Միջանի բույսերի սերմերի հասունությունը կապված է նրանց թափվելու ժամանակի հետ: Սերմերի թափման առաջն առնելու համար, այսպիսի բույսերի բերքահավաքը կատարում են կատարյալ հասունությունից առաջ: Այսպես, որինակ, հացաբույսը հավաքում են մեղրամոմային հասունության շրջանում (յերբ հետք է թողնում յեղունգով ծակելուց):

Կան կուլտուրաներ, ինչպես, որինակ, սերմացուլի համար ցանված ճակնդեղը, վոր միաժամանակ չի հասնում. այդ դեպքում բերքահավաքը կատարվում է միջանի անպամից կամ այն ժամանակ, յերբ հասել է մեծագույն մասը, այն հաշվով, վոր չհասածները կհասնեն հավաքելուց հետո:

Նկատի ունենալով, վոր բերքատվության հետագա մշակումը և պահպանումն ավելի հաջող է ընթանում, յերբ բերքի խոնավությունը շատ չէ, դրա համար բերքը հավաքում են ըստ հնարավորության չոր յեղանակին. հնձված բույսերը թողնում են մի առժամանակ դաշտում, շորանալու համար:

Ներկայումս մեզ մոտ, սովխոզներում և կոլխոզներում, բերքահավաքը միայն մեքենաներով է կատարվում. դրա համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես պետք է աշխատեն հավաքող մեքենաները, վոր բերքատվությունը չպակասի:

Հնձելու ժամանակ չպետք է թույլ տալ, վոր բացատներ մնան: Բացատներն առաջանում են, յերբ արտերի ծայրին անկանոն շրջադարձեր են կատարվում, յերբ հնձիչի դանակը ծածկվում է մոլախոտերով կամ հողով և դադարում է կանոնավոր աշխատել, յերբ տրակ-

տորիստը անփուլթ կերպով է աշխատում: Բացատներ թողնելուց խուսափելու համար անհրաժեշտ է՝

1. Սմենապարզ հնձիչ մեքենաներով նախապես հրնձել զագոնի անկյունները:

2. Արտը հնձել անկյունագծի (դիագոնալի) ուղղությամբ. այդպես անելուց հետո շրջադարձերը կկատարվեն արտի արդեն հնձված մասերով:

3. Հետեվել, վոր դանակը սուր լինի. առնվազն 4 ժամ աշխատանքից հետո դանակը սրել և փոխել:

Հացաբույսը մեքենայով հնձելիս, նրա 10%-ը կարող է կորչել (թցփած հացահատիկներ և հասկեր): Կորուստը փոքրացնելու համար անհրաժեշտ է, վոր դանակները սուր լինեն: Նմանապես կարելի է, վոր կանոնավոր բարձրության վրա սարքադրված լինի վրլակը և կտրող ապարատը:

Կտրող ապարատի, վրլակի հարվածից թափվող հացահատիկի նշանավոր մասը պահպանվում է հատիկավորսիչների կիրառումով:

Յերբ հացաբույսը հավաքում են խրձկապիչներով, պետք է հետեվել՝ 1) վոր շպագատը շատ ձգված չլինի, 2) վոր սեղմիչի գսպանակները չափազանց լարված չլինեն, 3) վոր կտուցի վերին մասի գսպանակը շատ լարված չլինի, հակառակ դեպքում շպագատը կարող է կտրվել, 4) վոր խրձկապիչը չկապված խրձեր դուս հետի:

Յեթե դուրս նետված խրձերը շատ փոքր են, պրկող լծակը ներքև են իջեցնում և ձգում են գսպանակը: Իսկ յերբ խրձերը շատ մեծ են, պրկող լծակը բարձրացնում են վերև, իսկ գսպանակը թուլացնում: Հրնձելու ժամանակ տրակտորիստը պետք է ուշադրությամբ հետեվի, վոր մեքենայի համար սահմանված իննամբը ճշտությամբ կատարվի, վորպեսզի նա ան-

խափան աշխատի, և հացահատիկի բերքը չպահասի:

Կալսումը կանցնի հաջող և անխափան, յերբ կալսիչը սարքադրված լինի կանոնավոր կերպով, և հացաբույսը թմբկին հասցվի հավասար չափերով:

Յեթե կալսելու ժամանակ հացահատիկը չափազանց փշրվում է, պետք է դեկան միքիչ հեռացնել թմբկից. կամ յեթե հացահատիկը վատ է կալսվում, հարկավոր է ուղղե դեկանը և թմբուկը:

Յեթե թմբուկը խցվում է հացաբույսով, հարկավոր է կազմակերպել, վոր հացաբույսը կանոնավոր կերպով և հավասար չափերով տրվի թմբկին:

Յերբ հացահատիկը կորչում է կուսքի մեջ, նշանակում է քարմաղը գերաբեռնված է կամ դեկան շատ մոտ սարքավորած լինելուց, կամ ծղոտաթափի ծակերը խոշոր լինելուց. այդ կորստի պատճառը կարող է լինել նաև այն, վոր քարմաղը հարկավոր թեքումը չունի կամ դանդաղ է շարժվում, վոր փոկը բուքս է տալիս, վոր վերջապես ինքը վիլակն է դանդաղ շարժվում:

Այս բոլոր պատճառները պետք է ստուգվեն և վերացվեն:

Յնքը հացահատիկը կորչում է ծղոտի մեջ, նշանակում է ծղոտը դուրս գալու ժամանակ վենտիլացիան սաստիկ հողմահարում է. դրա պատճառը կարող է լինել նաև այն, վոր կամ կալսիչը հավասարաչափ չի աշխատում, կամ ծղոտի մաղի ծակերը լցվել են և հարկավոր չափով չի հողմահարում, կամ վենտիլատորի պատուհանները հավասարաչափ չեն բացվում, կամ առաջանում է խցում, այսինքն՝ ներքին քամհարի գերաբեռնավորում, վոր հետեվանք է առաջին քամհարի մաղերի անկանոն ընտրության և այլն: Անհրաժեշտ է վերացնել վերը մասնանշված բոլոր պատճառները:

վորպեսզի կալսիչը կանոնավոր աշխատի և հացահատիկի բերքը չպահասի:

Հացահատիկային կոմբայնը գյուղատնտեսական այն բարդ մեքենան է, վորի ոգնությամբ կատարվում են միաժամանակ և՛ հունձը և՛ կալսումը, ուրիշ խոսքով նա կապված է միացյալ յերկու մեքենայից՝ հնձող մեքենայից կամ «խեղերից» և կալսող մեքենայից: Հետեվաբար կոմբայնին է վերաբերում այն բոլորն, ինչ վոր ասվեց խրձկապիչի և կալսիչի մասին. տարբերությունն այն է միայն, վոր կոմբայնում խեղերը վիլակներով հնձված հացաբույսը գցում է կոնվեյերի վրա, իսկ վերջինը հասցնում է վոչ թե կապող ապարատին, այլ ուղղակի կոմբայնի թմբուկին:

Ահա այն նվազագույնը, ինչվոր պետք է իմանան կոմբայնավարը և տրակտորիստը, գյուղատնտեսության ստախանովականները, և յուրաքանչյուր կոլխոզնիկ վորպեսզի կարողանան հետեվել աշխատանքին, սկսած ցանելու համար սերմացու պատրաստելուց մինչև կալսման ավարտումը: Միայն այն ժամանակ հեշտությամբ գլուխ կգա մոտակա տարիներում ?— Տ միլիարդ փութ հացահատիկ արտադրելու գործը:



■ Մրիկի (զանայի) սեսակները զանազան հացաբույսերի վրա:



Նկ. 15. Փոշանման մրիկ (զանա):

Նկ. 16 Ամուր կամ զարշահա մրիկ (զանա):



Նկ. 17. Գարու ամուր և փոշանման մրիկ:

Նկ. 18. Հաճարի ցոլունային մրիկ (զանա):





Նկ. 19. Վարսակի մրիկ:




Նկ. 20. Փանիշտանման մրիկ յեզիպ-
տացորենի հատիկներէ վրա:

« Ազգային գրադարան



NL0288370



16.958

